դիմեալ կամէին հասանիլ ի պաղտատ. և ի գալն իւրեանց ի ճանապարհի մեռեալ են ի ժանտամահէն 160 ոգիք։ Զայս լուեալ պաղտատայ փաշային՝ երկու աւուրքք հեռի ճանապարհաւ՝ արգելեալ է զնոսա չգալ ի պաղտատ։ Եւ այժմ ի կոտորածի կան նոքա. զայս լուայ յերկուց անձանց։ (Հ. Միք. Զամչ. առ Մելգոնեան, 1771 յուլիս 2. Պասրա)։

յե.

Վասն մահտարաժամի եղելոյ ի տիարպէքիր... գրեցից քանի ինչ. իբր զի յաւուրս յայսոսիկ եկն թուղթ ի տիարպէքիրու ի հաւատարիմ անձանց և յազգականաց նոցա՝ որք աստ են... և գրեն՝ թէ 55000 ոգիք մեռեալ են։ 4000 հայք. 2000՝ ասորիք, (որք և սիւրեանիք ասին). 120՝ քէլտանիք՝ թէ բուն քէլտանիք, և թէ դարձեալքն ի նեստորականաց (զի ի նոցանէ դարձեալքն քելտանիք կոչին աստ)։ 100 հրէայք. 50 յոյնք. իսկ մնացեալքն տաճիկք։ Եւ այսոքիկ միայն ի քաղաքի, թող զգիւղորայս, որոց ոմանք անբնակք են եղեալ։ (Հ. Միք. Զամչ. առ Մելգոնեան, 1771 սեպտ. 12. ի Պասրա)։

յզ.

Փետր. 8 (իմա՛ ըստ հին տօմարին) այրեցաւ Ղալաթիա ժամս իբր 16. և այրեցաւ եկեղեցին լուսաւորչին հայոց. և երկու եկեղեցիք յունաց. յապրի՛. 20 եղև հրկէզ ի ստամպօլ ի հօճա փաշայն. և այրեցաւ ժամս իբր 16. և այրեցան բազում մեծամեծ ապարանք մեծամեծացն. և եալը քեօշկիւն ևս։ Ի հոկ. 13 այրեցաւ ապարանն էէնիչէր աղասիին, զոր կոչեն՝ Աղա քափուսու։ Թող զայլ մանր մունր հրկէզսն։ Դրձ. Ցնվրի. 13 մեռաւ սուլթան պայազիտն, որ էր եղբայրն Սուլթան Մուստաֆային որ այժմ թագաւորէ։ (Հ. Յակ. Զամչ. առ Հ. Մանուէլ [Իմիրզէ], Ստամբոլ 1771 Հոկտ. 22)։

յէ.

Հիւանդութիւնք ժամանակիս հիմամայ, տամլայ, և եէնմէ ոչ սակաւք եղեն. և ի միւսումն աւուր ոմն ի բարեկամաց պատմեաց զերից երևելի անձանց իւրոց բարեկամաց, զի ի միում եօթնեկի լուայ ասէ զմահ երեցուն սոցա առանց լսելոյ զլուր հիւանդութեան նոցա... նոյնպէս և Սարգիս վարդապետն հիւանդացաւ մերձ ի մահ, սակայն այժմ յուսամք թէ անցոյց զօրհասն...։ Զարարողութիւնս թիւ պատարագին յօրինեաց աթանաս վարդապետն ընդ Հ. Զաքարիային և ընդ այլոց և թարգմանեալ լատիներէն, ստորագրութեամբ բազմաց պատրաստեաց առաքել ի Հռովմ զի տպագրեսցի։ Ջսրբագրութիւն գրոցն աղօթից Գրիգորի Նարեկացւոյ ըստ այդր բաղդատեալ օրինակացն, և ըստ այլ ևս հին օրինակաց զորս տուեալ է գտանել և բաղդատել ի վանս մոկաց, անմիջապէս և միջնորդութեամբ Հ. Զաքարիային աղաչեաց ինձ յօրինել Մուրատօղլու Գասպար ամիրայն. և ես սակաւ առ սակաւ որչափ պարապ գտայ ի զբաղանաց կատարեցի զհայցուած նորա և մինչև ցայժմ ժամանեցի ի վաթսուներորդ գլուխն։ (Հ. Անանիա առ Մելգոնեան, 1771 նոյեմբ. 9. [Կ. Պոլիս])։

յը.

Իմացայ զտալն էջմիածնայ զ18 հազար ռուփին, վասն զանգակատան, վասն դպրատան և վասն տպարանի։ (Մելգոնեան առ Հ. Մանուէլ որ ի Հնդիկս, 1771 նոյեմբ. 18. [Ս. Ղազար])։